

Քրիստոսի կատարեալ այս ամենայն ի ժամանակս Վռամշապիոյ¹, ըստ յառաջագոյն շգրելոց, եւ լուսաւորեալ աշխարհս Յայոց՝ եկաց յետ այսորիկ թագաւորն Վռամշապուհ ամս բազումս³, եւ հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանգստիւ⁴ յաշխարհիս Յայոց:

ԺԲ. Յետ այսորիկ մեռաւ եւ Շապուհ արքայն Պարսից, եւ թագաւորեաց Վռամ որդի Նորա, որ էր Կրման արքայ. յորմէ ինդրեցին իւրեանց Յայք թագաւոր զնոյն միւսանգամ զԽոսրով⁵ զեղբայր Վռամշապիոյ, զոր յառաջնումս բանսարկութեամբ ետուն մերժել զնա Յայք՝ Շապիոյ արքային Պարսից ի թագաւորութենէ Յայոց: 2 Եւ Նորա կատարեալ զինդիրս Նոցա՝ թագաւորեցուցանէր դարձեալ զԽոսրով⁶, զայր յոյժ ծեր: 3 Եւ եկեալ Խոսրով յաշխարհս Յայոց եւ կեցեալ ամիսս ութ՝ վախճանէր, առ հարսն յաւելեալ:

4 Եւ յետ մահուան Վռամայ արքային Պարսից թագաւորեր Յազկերտ եղբայր Վռամայ որդի Շապիոյ ի վերայ աշխարհին Պարսից: 5 Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Յայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանել ի վերայ սոցա զիւր զորդին, որում աւուռն էր Շապուհ, ըստ անուան հաւր իւրոյ. խորհեալ չարաչար իմացմունս առնն ի միտս իւր. առաջին՝ զայս, եթէ աշխարհն Յայոց մեծ է եւ աւգտակար, սահմանակից եւ դրակից է Յունաց իշխանութեանն, ընդ որոյ⁷ ձեռամբ բազումք են հնազանդեալք⁸ յազգէն Արշակունեաց. որոց գուցէ գորովեալ առ միմեանս ազգացն, ըստ արիւնի եղբարց, որք ընդ մերով եւ ընդ Յունաց իշխանութեամբն են, ⁹եւ հաւանեալ երբէք սիրով ընդ միմեանս եւ եկեալք ի միաբանութիւն՝ խաւսեցին ի խաղաղութիւն ընդ թագաւորին Յունաց, եւ ընդ Նորա հնազանդութեամբ յաւժարեալք՝ ապստամբեցին ի մէջ: 6 Եւ որպէս կալեալ է զմեզ բազում անգամ յաշխատութեան՝ առաւել եւս յաւելլուածով Նոցա՝ անհանգիստ առնիցեն զմեզ պատերազմաւ: 7 Եւ երկրորդ՝ զի յարինացս մեր աւտար են եւ ատեցողք, եւ միահաւան ունին զպաշտան Նոցա եւ զարեւս: 8 Արդ՝ ի թագաւորել յազգէս մերմէ ի վերայ աշխարհին Յայոց՝ յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի թագաւորու-

1 *Ձ. այստեղ եւ յետոյ՝ Վռամշապիոյ*

2 *ՏՏ. գրեցելոց... զաշխարհս*

3 *ՏՏ. ամս քսան եւ մի. Ձ. նախ՝ ամս բազումս, յետոյ քերած եւ ուղղած՝ ամս իա. լուսանցքում՝ Վռամշապուհ մեռանի*

4 *ՁՏՏ. հանդիսի. այսպէս ըստ Ն. Բ.*

5 *ԲԳտ. Խոսրով*

6 *Ձ. լուսանցքում՝ Խոսրով դարձեալ թագաւորէ*

7 *Ձ. ընդ որ*

8 *Ձ. հնազանդեալ*

9 *ՏՏ. չիք եւ հաւանեալ... ընդ միմեանս*